ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ 2013 Թ.-Ի ՀՈՒՆՎԱՐԻՑ ԴԵԿՏԵՄԲԵՐ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ք.Երևան
07 հունիսի, 2014թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԱԽԱԲԱՆ
II. ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱ
III. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
IV. SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
V. SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ
VI. ԱՄՓՈՓՈՒՄ

I. ՆԱԽԱԲԱՆ

2014 թ.-ի հունիսի 07-ին Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից կազմակերպվեց և ՀԵԻԱ Կենտրոնական գրասենյակում անցկացվեց Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի (այսուհետև՝ ՀԵԻԱ) գործունեության 2013թ.-ի հունվար ամսից մինչև 2013թ.-ի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածի ինքնագնահատման սեմինար:

Ինքնագնահատման սեմինարին (այսուհետ՝ սեմինար) ներգրավվել էին 27 մասնակիցներ, այդ թվում նաև՝

1. *ՀԵԻԱ-ի 15 լիիրավ անդամներ, որոնցից 4-ը հանդիսանում են ՀԵԻԱ-ի վարչության անդամներ, 1-ը՝ ՀԵԻԱ ժամանցային ակումբի ղեկավար*
2. *10 անդամ չհանդիսացող անձ*
3. *2 կամավոր*

Ինքնագնահատման սեմինարի նպատակներն էին՝

- ծանոթանալ կազմակերպության կայունության, գնահատման և ինքնագնահատման գաղափարներին, կազմակերպության ինքնագնահատման նպատակներին, ՀԿ ենթահամակարգերին և նրանց բաղադրիչներին,
- ներկայացնել և քննարկել կազմակերպության վերջին մեկ տարվա գործունեությունը,
- իրականացնել կազմակերպության ինքնագնահատում,
- մշակել 2014թ.-ի մեկամյա զարգացման պլան,
- մշակել 2014-2016թթ. ՀԵԻԱ Ռազմավարական պլանը:

Ինքնագնահատման սեմինարի արդյունքներն են հանդիսանում տվյալ հաշվետվությունը, կից ներկայացված ՀԵԻԱ-ի զարգացման մեկ տարվա պլանը, ՀԵԻԱ-ի նոր մշակված 2014-2016թթ. Ռազմավարական պլանը:

II. ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱ

ՀԵԻԱ ինքնագնահատման գործընթացը իրականացվեց ինտերակտիվ սեմինարի ձևով, որի ընթացքում կիրառվեց մի քանի մեթոդների համադրություն՝ «ուղեղի գրոհ», մետապլան, քննարկումներ: Սեմինարը անցկացվեց մեկ օր՝ ընդհանուր առմամբ 5 ժամ տևողությամբ:

ՀԵԻԱ ինքնագնահատման գործընթացը բաղկացած էր հետևյալ հիմնական փուլերից.

1. Ներածություն. Կազմակերպության կայունության, գնահատման և ինքնագնահատման գաղափարները: Ի՞նչ նպատակով է իրականացվում կազմակերպության ինքնագնահատումը.
2. ՀԵԻԱ-ի 2013 թվականի գործունեության ներկայացում և քննարկում.
3. ՀԿ ենթահամակարգերը, նրանց բաղադրիչները և նրանց գնահատում.
4. Ի՞նչ է SWOT-ը, ինչու՞ է այն իրականացվում.
5. Կազմակերպության ենթահամակարգերի SWOT վերլուծություն (ղեկավարում, կառավման համակարգեր և գործողություններ, ծրագրեր և ծառայություններ, ֆինանսական կայունություն, մարդկային ռեսուրսներ, արտաքին հարաբերություններ և քարոզչություն).
6. SWOT վերլուծության արդյունքների ամփոփում.
7. Լրացուցիչ ուշադրության արժանի ենթահամակարգերի առանձնացում և դրանց զարգացման ուղղությամբ ձեռնարկվելիք գործողությունների մշակում,
8. ՀԵԻԱ-ի 2014թ.-ի մեկամյա զարգացման պլանի մշակում:

ՀԵԻԱ-ի ինքնագնահատման գործընթացը կազմակերպվեց և իրականացվեց ՀԵԻԱ-ի անդամ, փաստաբան Սոնա Հարությունյանի և ՀԵԻԱ-ի ղեկավարի օգնական Նվարդ Լոռյանի կողմից:

ՀԵԻԱ-ի ինքնագնահատման գործընացի նախապատրաստական և իրականացման գործընթացը բաղկացած էր հետևյալ քայլերից.

1. *գործընթացի մեթոդների մշակում և վերլուծություն,*
2. *նախապատրաստական աշխատանքներ* ՝
   - սեմինարի նյութերի կազմում,
   - բաժանվող նյութերի, նամակների, փաթեթների նախապատրաստում,
   - նյութերի բաժանում մասնակիցներին,
   - սենյակի նախապատրաստում,
   - ֆլիպ չարթերի նախապատրաստում,
3. *ներածական նյութերի ներկայացում ինքնագնահատման փուլերի առնչությամբ,*
4. *կազմակերպության մեկ տարվա գործունեության ներկայացում,*
5. *քննարկումների արդյունքների գրանցում ֆլիպ չարթերի վրա,*
6. *SWOT վերլուծության անցկացում կազմակերպական ենթահամակարգերի համար,*
7. *ՀԵԻԱ-ի զարգացման պլանի նախագծի մուտքագրում համակարգիչ,*
8. *ինքնագնահատման գործընթացի և արդյունքների վերաբերյալ հաշվետվության պատրաստում:*

III. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵԻԱ-ի 2013թ.-ի գործունեության ինքնագնահատման սեմինարի սկզբում ներկաների ուշադրությանը ներկայացվեց ներածական նյութ, որը վերաբերում էր կազմակերպության կայունության, գնահատման և ինքնագնահատման գաղափարներին: Արծարծվեցին այն հարցերը, թե ինչ նպատակով է իրականացվում կազմակերպության ինքնագնահատումը, ինչ է այն տալիս, ինչպես են օգտագործվում դրա արդյունքները: Բացի այդ՝ ներկաները հնարավորություն ստացան ծանոթանալ զարգացման կայուն փուլում գտնվող հասարակական կազմակերպությունների բնութագրական կառուցվածքին՝ ՀԿ 6 ենթահամակարգերին, նրանց բաղադրիչներին և այն գաղափարներին, որոնց պետք է առնչվեին գնահատման գործընթացում:

Հաջորդ փուլում ներկաների ուշադրությանը ներկայացվեց, թե ինչ է իրենից ներկայացնում SWOT վերլուծության մեթոդը, ինչու և ինչպես է այն կիրառվում: Այնուհետև աշխատանքային խումբը մեկ առ մեկ դիտարկեց ՀԿ ենթահամակարգերը (ղեկավարում, կառավարում, ծրագրեր և

ծառայություններ, ֆինանսական կայունություն, մարդկային ռեսուրսներ, հարաբերություններ այլ կազմակերպությունների հետ և շահերի պաշտպանություն) և անցկացրեց վերջիններիս SWOT վերլուծություն՝ արձանագրելով դրանց ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու վտանգները: Վերլուծությունների արդյունքները ամփոփվեցին ֆլիփ չարթերի վրա:

Մասնակիցները լրացրեցին հատուկ մշակված հացաթերթիկներ, որի հանրագումարի արդյունքում ընտրվեց այն 3 ենթահամակարգերը, որոնք, կարիք ունեն լրացուցիչ ուշադրության: Այս տարի այդ ենթահամակարգերն էին **ֆինանսական կայունությունը, ծրագրեր և ծառայությունները, արտաքին հարաբերությունները**, որոնց նկատմամբ ՀԵԻԱ-ն պետք է սահմանի առաջնայնություն և դրանք ընդգրկի մեկամյա զարգացման պլանում՝ նպատակաուղղված զարգացնելու միտումով:

IV. SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վերոնշյալ երեք ենթահամակարգերի SWOT վերլուծության արդյունքները ներկայացվում են ստորև.

ա. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Հեղինակություն և գործարար համբավ • Մշակված ներքին և արտաքին քաղաքականություններ • Համագործակցութան հուշագրեր • Հակակոռուպցիոն շարժում • Հաստատված գործնական կապեր	• Միջազգային կոնֆերասներին մասնկցության պակաս • Համագործակցության պակաս միջազգային համանման կառույցների հետ

Հնարավորություններ	Վտանգներ
• Պետական կառույցների հետ համագործակցության խորացում • Իրավաբան ուսանողների ներգրավվում • Տարածաշրջանային համագործակցության խորացում • Անդամակցություն միջազգային կառույցներին, մասնակցություն նրանց գործունեությանը • Միջազգային գիտաժողովների կազմակերպում • Կարճ ֆիլմի պատրաստում ՀԵԻԱ-ի մասին	• Ֆորս մաժոր իրավիճակներ (պատերազմ, քաղաքականության փոփոխություն) • Անառողջ մրցակցություն դաշտում գործող համանման կառույցների կողմից • ԶԼՄ-ների ոչ պրոֆեսիոնալ մոտեցում և օբյեկտիվ լուսաբանում • Պետական մարմինների կողմից համագործակցության ոչ բարյացկամ դրսևորում

բ. ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր

- Աշխատակազմի կարգապահություն
- Տարիների փորձ
- Իրավաբան.նեթի առկայություն, ՀԵԻԱ և հակակոռուցպիոն շարժման եռալեզու կայքեր
- Լավ կառավարում, մարզային գրասենյակներ և հակակոռուցպիոն կենտրոններ՝ տեխնիկապես հագեցված
- Մարդկային ռեսուրսներ
- Թիմային ոգի, ավանդույթներ, նվիրվածություն աշխատանքին
- Շահառուներ
- Կրթական ծրագրերի իրականացում

- Կամավորական ուժի պակաս (կենտրոնական և մարզային գրասենյակներում)
- Ծառայության վերաբերյալ գովազդներ պակաս
- Աշխատակազմի անդամների պակաս (հեիա, իրավաբան.նեթ)
- Իրավաբան.նեթի տեխնիկայի պակաս
- ՀԵԻԱ հանձնաժողովների և ակումբերի պասիվություն
- Աշխատակազմի անդամների հարակից հմտությունների պակաս
- Մարզային գրասենյակների և Հակակոռուպցիոն կենտորնենրի թվի կրճատում
- ժամանցային միջոցառումների պակաս
- Մարզային գրասենյակների ապակենտրոնացում ՀԵԻԱ կենտրոնական գրասենյակից

Հնարավորություններ	Վտանգներ
• Անգլերեն նյութերի, հաջողված պատմությունների հանրայնացում վեբ կայքերի միջոցով • Ակումբների, հանձնաժողովների, ԻՈՒԲ-ի առկայություն • Ուսանողների ներգրավվումը մասնագիտական հմտություններին նվիրված միջոցառումների կազմակերպում • ՀԵԻԱ անդամների/կադրերի առաջմղման հնարավորություն • ԲՈՒՀ-երի հետ արտադրական պրակտիկայի կազմակերպում • Առանձին ծրագրերի իրականացում մարզային մասշտաբով • Մեդիա աջակցության հնարավորություն մարզերում • Օրենսդրական փոփոխությունների լոբբինգ	• Գործունեությունից բխող վտանգներ • Անդամների ոչ նվիրվածություն, շահագրգռվածության/մոտիվացիայի պակաս • Կադրային հոսունություն

Գ. ՖԻՆԱՆՍՆԵՐ/ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Մարտահրավերներին դիմակայելու ունակություն • Միջոցների հայթայթման հնարավորություններ • Crowd Funding հնարավորություն	• Ինքնաֆինանսավորման/ֆինանսական բազմազանության պակաս

Հնարավորություններ	Վտանգներ
• Ներգրավվածություն բիզնես ոլորտում • Ֆինանսական բազմազանության ապահովում	• Քաղաքականության փոփոխություն, դոնորների հետաքրքրության շրջանակների սահմանափակում • Դոնորների գործունեության ոլորտի փոփոխություն • Օրենսդրական փոփոխություն (Օրինակ՝ պարտադիր կենաթոշակային համակարգի ներդրում), օրենսդրության անփոփոխ վիճակ (օրինակ՝ չընձեռել ՀԿ-ներին ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք)

V. SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

ՀԵԻԱ-ի ինքնագնահատման աշխատանքային հանդիպման ընթացքում իրականացված վերլուծության արդյունքները օգտագործվեցին կազմակերպության մեկամյա զարգացման պլանի կազմման համար: Այդ նպատակով յուրաքանչյուր ենթահամակարգի զարգացման ուղղությամբ ձևավորվեց աշխատանքային խումբ, որի քննարկման շրջանակներում ձևակերպվեցին զարգացման հիմնական ուղիներ, որոնց իրականացման միջոցառումներն ու գործողությունների պլանը կընդգրկվի զարգացման պլանում:

<u>Արտաքին հարաբերություններ</u> ենթահամակարգի զարգացման նպատակով այս տարի առաջնային խնդիր ձևակերպեց այն, որ ՀԵԻԱ-ն պետք է նոր կապեր ստեղծի՝ մասնավորապես ամրապնդելով տարածաշրջանային և միջազգային համագործակցությունը:

<u>Ծրագրեր և ծառայություններ</u> ենթահամակարգի զարգացման նպատակով աշխատանքային խումբը առանձնացրեց հետևյալ ուղիները՝ ՀԵԻԱ-ի վարչության անդամների, գրասենյակների ղեկավարների և անդամների համար դրամաշնորհային ծրագրեր գրելու ուսուցման կազմակերպում, նոր ծրագրերի ներկայացում և ծրագրերի բազմազանության ապահովում:

<u>Ֆինանսական կայունության</u> ենթահամակարգի զարգացման առաջնային խնդիր ձևակերպվեց ֆինանսական աղբյուրների /դրմաշնորհների/ բազմազանության պակասը, այդ թվում նաև ինքնաֆինանսավորման ազբյուրների:

VI. ԱՄՓՈՓՈՒՄ

Կազմակերպության կայուն զարգացումն ապահովելու համար մենք կարիք ունենք իմանալ, թե որտեղ է այն գտնվում տվյալ պահին, արձանագրել կազմակերպության վիճակը, տեսնել այն ոլորտներն ու կողմերը, որոնք առավել ուշադրության կարիք ունեն: Այդ իսկ նպատակով յուրաքանչյուր տարի ՀԵԻԱ-ն անց է կացնում կազմակերպության ինքնագնահատում, որի արդյունքներն ընդգրկվում են կազմակերպության մեկամյա զարգացման պլանում: Այս տարի զարգացման պլանում ընդգրկվեցին երեք ոլորտներ, որոնց զարգացման ուղղությամբ ՀԵԻԱ-ն հետևողականորեն կաշխատի 2014թ.-ի ընթացքում: Կազմակերպության գործունեության ինքնագնահատման արդյունքներն օգտագործվեցին նաև ՀԵԻԱ-ի նոր երկարաժամկետ ռազմավարական պլանում: Այս տարի ինքնագնահատման գործընթացը հանդիսացավ ՀԵԻԱ-ի արտաքին գնահատման տրամաբանական շարունակությունն ու ռազմավարական պլանավորման գործընթացի կարևորագույն քայլ: